Funded by the European Union

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ-2024

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)

Հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը և պարտադիր չէ,
որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2024

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC)՝ Իրավաբանների հայկական ասոցիացիան և Ագորա Սենթրլ Յուրոփ կազմակերպությունները համագործակցաբար իրականացնում են «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրը՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնմանը, խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացները:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային նախաձեռնություն է: Կարևորելով հանրային միջոցներով հանրության համար իրականացվող ծրագրերի նպատակայնությունը, հասցեականությունը, իրականացման արդյունավետությունը և հանրության գոհունակությունը՝ Կենտրոնը փորձում է պրոֆեսիոնալ ներդրում ունենալ քաղաքականությունների մշակման և քննարկման գործընթացներում:

Ծրագրի շրջանակներում Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնն իրականացնում է բյուջետային գործընթացների վերաբերյալ քաղաքացիական հասարակության տեղեկացվածության մակարդակի բարելավման, բյուջետային գիտելիքի և բուջետային գործընթացին մասնակցելու կարողությունների ձևավորման, քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներին ՔՀԿ-ների արդյունավետ մասնակցության աջակցության միջոցառումներ, այդ թվում՝ բյուջետային տեղեկատվության պարզեցումներ և այլն:

Արդարադատության 2024 թվականի պարզեցված բյուջեն վերլուծական հրապարակում է՝ ուղղված հանրության լայն շրջանակի: Այն նպատակ ունի բարձրացնել հանրության իրազեկվածության մակարդակը, հիմքեր ստեղծել քաղաքացիական հասարակության և հանրային հատվածի արդյունավետ երկխոսության և տեղեկացված քննարկումների համար:

Տեղեկատվության հիմնական աղբյուրը պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներն են և պետական բյուջեի կատարման հաշվետվությունները, պաշտոնական այլ փաստաթղթեր և տվյալներ: Պետական բյուջեին վերաբերող 2024 թվականի համար բերվող տվյալները ծրագրային են, 2023-ի և նախորդող բոլոր տարիների տվյալները փաստացի են: Փաստաթղթում արդարադատության ոլորտի ծախսերը նույնականացվում են ոլորտում իրականացվող բյուջետային ծրագրերի ծախսերի հանրագումարի հետ:

© ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ, 2024

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԳՐԵԿՈ	Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿԿ	Հակակոռուպցիոն կոմիտե
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՍԴ	Սահմանադրական դատարան
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔԿ	Քննչական կոմիտե
ՔԿԱԳ	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության
ՔՀԿ	Քաղաքական հասարակության կազմակերպություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

05. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

08. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ

09. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

10. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ ԸՍՏ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

11. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

13. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

17. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՋԵՆ

19. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

21. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

22. ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՋԵՆ

24. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵՆ

25. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԲՅՈՒՋԵՆ

27. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՋԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

- 2024 թվականի պետական բյուջեն հաստատվել է եկամուտների գծով 2,723.6 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 3,206.5 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով՝ 482.9 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի համապատասխանաբար 25.9, 30.5 և 4.6 տոկոսը:
- Արդարադատության ոլորտում իրականացվող ծախսերը պետական բյուջեում ներկայացված են արդարադատության և դատական գործունեության ծրագրերով, որոնք համակարգվում են ՀՀ Արդարադատության նախարարության և այլ պետական մարմինների կողմից, որոնք են՝ ՀՀ սահմանադրական դատարանը, Բարձրագույն դատական խորհուրդը, ՀՀ դատախազությունը, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ՀՀ քննչական կոմիտեն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:
- 2024 թվականին արդարադատության ոլորտում իրականացվող ծրագրերին կուղղվի 75.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է ավելի քան 3 մլրդ դրամով կամ 4.2 տոկոսով:
- ՀՆԱ-ի նկատմամբ արդարադատության ոլորտի ծախսերը կկազմեն 0.7 տոկոս՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 0.1 տոկոսային կետով:

ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվող քաղաքականությունները կուղղվեն՝

ԴԱՏԱԿԱՆ և ԻՐԱՎԱԿԱՆ բարեփոխումների ոլորտում՝

- էլեկտրոնային արդարադատության, անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման, ժողովրդավարական ինստիտուտների և դատական համակարգի բարեփոխումների, քրեաիրավական, քաղաքացիական և քաղաքացիական դատավարության, վարչական և վարչական դատավարության, սնանկության, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների, փաստաբանության, հարկադիր կատարման, նոտարիատի և արդարադատության համակարգի ընդհանուր զարգացմանը:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ քաղաքականության ոլորտում՝

- Կոռուպցիայի կանխարգելմանը և բարևարքության համակարգերի ամրապնդմանը, կոռուպցիայի հակազդման իրավական և ինստիտուցիոնալ համակարագերի կատարելագործմանը, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործմանը, պետություն-գործարար վարչարարության դյուրացմանը, հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման համակարգի կատարելագործմանը:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ոլորտում՝

- Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, մարդու իրավունքների մասին հանրային իրազեկության բարձրացմանը, պաշտպանության միջոցների վերաբերյալ գիտելիքների տարածմանը:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ և ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ծառայության ոլորտում՝

- Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացմանը և արդիականացմանը, անչափահասների, կին դատապարտյալների և հաշմանդամություն ունեցող անձանց համար պահման պայմանների բարելավմանը, քրեակատարողական հիմնարկներում առողջապահության, վերականգնման և վերասոցիալականացման ծառայությունների բարելավմանը, պրոբացիայի ծառայության զարգացմանը և նոր այլընտրանքային միջոցների կիրառմանը:

- Պետական բյուջեի ծախսերի նկատմամբ արդարադատության ծրագրերին ուղղված բյուջետային ծախսերի կշիռը 2024-ին կկազմի 2.4 տոկոս՝ 2019-2023թթ. 2.6 տոկոս միջին մակարդակի պայմաններում:
- Արդարադատության ոլորտի ֆինանսավորման ծավալների աճի միջին տեմպը 2020-2024թթ. կկազմի 10.7 տոկոս, որը 4 տոկոսային կետով զիջում է նույն ժամանակահատվածում պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճի մակարդակը:
- 2021-2023 թվականներին արձանագրվել են ոլորտի ֆինանսավորման ծավալների բարձր աճի տեմպեր: Մասնավորապես՝ 2023-ին ոլորտի գրեթե բոլոր պետական մարմինների դեպքում արձանագրվել են ֆինանսավորման ծավալների ամենաբարձր աճերը:
- Արդարադատության ոլորտում պետական քաղաքականությունը 2024-ին կիրականացվի 16 բյուջետային ծրագրերի միջոցով: ԱՆ կողմից համակարգվում են այդ ծրագրերից 7-ը: Թվով 3 ծրագրեր համակարգվում են Դատախազության կողմից: Մնացած 6 ոլորտային պատասխանատու մարմիններն իրականացանում են մեկական ծրագիր:
- Ոլորտային ծրագրերի բյուջեի 30.7 տոկոսը կամ 23.2 մլրդ դրամն ուղղվում է ՀՀ ԱՆ կողմից իրականացվող ծրագրերի իրականացմանը:
- Բյուջետային ֆինանսավորման ծավալների առումով, հաջորդող դիրքերում են ԲԴԽ-ն, ՔԿ-ն և Դատախազությունը՝ համապատասխանաբար ոլորտում իրականացվող ծախսերի՝ 25.4, 23.2 և 13.4 տոկոս կշիռներով:
- 2024-ին ամենամեծը ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորման աճն է՝ 39.4 տոկոս: Հետևում է ՀՀ քննչական կոմիտեն՝ 12.8 տոկոս աճի մակարդակով:
- Ոլորտում իրականացվող ամենամեծ ծրագիրը ԲԴԽ «Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» ծրագիրն է, որին ուղղվում է ոլորտի ծախսերի 25.4 տոկոսը կամ 19.2 մլրդ դրամ: Վերջինս նախորդ տարվա համեմատությամբ աճել է 12.8 տոկոսով: Ծրագիրը կարևորում է դատավորների ծանրաբեռնվածության նվազեցումը, ինչպես նաև գործերի քննման որակի բարձրացումը, գործերի քննության ժամկետների կրճատումը և դրանով իսկ քաղաքացիների համար արդարադատության մատչելիության բարելավումը:
- Ֆինանսավորման ծավալներով երկրորդ և երրորդ դիրքերում են ՀՀ ՔԿ կողմից իրականացվող «Քննչական ծառայություններ» և ՀՀ ԱՆ կողմից իրականացվող «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրերը՝ համապատասխանաբար՝ 17.5 և 13.8 մլրդ դրամ ֆինանսավորման ծավալներով:
- Ֆինանսավորման բացարձակ աճի առումով առաջին դիրքում կրկին ԲԴԽ «Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» ծրագիրն է, որի բյուջեն 2024-ին կաճի մոտ 2.2 մլրդ դրամով կամ 12.8 տոկոսով: Երկրորդ դիրքում ՔԿ կողմից իրականացվող «ՀՀ քննչական ծառայություններ» ծրագիրն է, որի աճը կկազմի մոտ 2 մլրդ դրամ կամ 12.8 տոկոս: Հետևում է ՀԿԿ «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և քննության ապահովում» ծրագիրը՝ ավելի քան 1 մլրդ դրամ կամ 39.7 տոկոս աճով:

- Դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց թիվը 2024-ին կկազմի 3,000 մարդ: Մեկ շահառու հաշվով քրեակատարողական ծառայությունների արժեքը կկազմի ամսական 345.7 հազ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է մոտ 8 հազ դրամով:
- Պրոբացիայի տակ գտնվող շահառուների թիվը կաճի մոտ 36.4 տոկոսով և կկազմի 7,500 մարդ: Մեկ շահառուի հաշվով տարեկան ծախսը կկազմի մոտ 104 հազ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ցածր է 28.2 տոկոսով:
- Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների դատավորների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվել է 60 տոկոս հավելում, իսկ Վերաքննիչ քաղաքացիական, Վերաքննիչ քրեական և Վերաքննիչ վարչական դատարանների դատավորների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ՝ 55 տոկոս հավելում:
- Քննիչների միջին ծանրաբեռնվածությունը կնվազի միջինում 43 վարույթով՝ կազմելով 261 նախորդ տարվա 304-ի դիմաց:
- Դատախազությունը կշարունակի թիրախավորել պետությանը պատճառված գույքային վնասի վերականգնումը և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը:
- ՄԻՊ ախատակազը կձգտի պահպանել և վերահաստատել Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից Հայաստանին շնորհված ամենաբարձր «A» միջազգային հեղինակավոր կարգավիճակը:
- Կոռոպցիայի կանխարգելման ոլորտում ջանքերը կուղղվեն կոռուպցիայի ընկալման համաթվի 2023 թվականի մակարդակի (47 միավոր) աստիճանական բարելավմանը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ

Արդարադատության ոլորտի բյուջեն և դրա տարեկան աճը, 2019-2024թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Արդարադատության ոլորտի բյուջեի կշիռը պետական բյուջեի ընդամենը ծախսերում և ՀՆԱ-ում, 2019-2024թթ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

- Արդարադատության ոլորտի բյուջեն իրենից ներկայացնում է այս ոլորտում իրականացվող բոլոր ծրագրերի բյուջետային ծախսերի հանրագումարը:
- 2024 թվականին արդարադատության ոլորտում իրականացվող ծրագրերին կուղղվի 75.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է ավելի քան 3 մլրդ դրամով կամ 4.2 տոկոսով:
- 2024-ին Արդարադատության ֆինանսավորման ծավալները կգերազանցեն 2019-ի մակարդակը ավելի քան 1.6 անգամ:

- Պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ արդարադատության ծրագրերին ուղղված բյուջետային ծախսերի կշիռը 2024-ին կկազմի 2.4 տոկոս՝ 2023-ի՝ 2.8 տոկոս մակարդակի և 2019-2023թթ.՝ 2.6 տոկոս միջին մակարդակի պայմաններում:
- ՀՆԱ-ի նկատմամբ արդարադատության ոլորտի ծախսերը 2024-ին կկազմեն 0.7 տոկոս՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 0.1 տոկոսային կետով: ՀՆԱ-ի նկատմամբ արդարադատության ոլորտի ծախսերի կշիռը կայուն է, 2019-2023թթ. միջին մակարդակը կազմել է 0.72 տոկոս:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՃԸ

- Արդարադատության ոլորտի ֆինանսավորման աճը 2020-2024թթ. կայուն չէ: Ֆինանսավորման ծավալների աճի միջին տեմպը 2020-2024թթ. կազմել է 10.7 տոկոս, որը 4 տոկոսային կետով զիջում է նույն ժամանակահատվածում պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճի մակարդակը:
- Ոլորտում ֆինանսավորման ծավալների աճի մեծ տեմպեր են արձանագրվել 2021-2023 թվականներին: Նկատենք, որ այս ընթացքում արդարադատության ոլորտի ֆինանսավորման աճը առաջանցիկ է եղել պետական բյուջեի ծախսերի աճի նկատմամբ:
- 2023-ին արձանագրվել են ֆինանսավորման իմաստով աճի ամենաբարձր տեմպերը թե՛ ոլորտի ընդամենը ծախսերի, և թե՛ առանձին ոլորտային մարմինների իմաստով: Թերևս բացառություն է ՄԻՊ աշխատակազմը:

Պետական բյուջեի և արդարադատության ոլորտի բյուջեի ծախսերի աճի դինամիկան, 2020-2024թթ., տոկոս



Արդարադատության ոլորտի պետական մարմինների բյուջետային ծախսերի աճը 2020-2024թ., տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ ԸՍՏ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

(փակագծերում՝ կշիռը արդարադատության ոլորտի բյուջեում)

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Արդարադատության ոլորտում իրականացվող բյուջետային ծրագրերը համակարգվում են ՀՀ Արդարադատության նախարարության և այլ պետական մարմինների կողմից, որոնք են՝ ՀՀ սահմանադրական դատարանը, Բարձրագույն դատական խորհուրդը, ՀՀ դատախազությունը, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ՀՀ քննչական կոմիտեն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:
- Արդարադատության ոլորտում իրականացվում են թվով 16 բյուջետային ծրագրեր, որոնցից 7-ը իրականացվում է ՀՀ ԱՆ կողմից, 3-ը՝ Դատախազության կողմից: Մնացած 6 ոլորտային մարմիններից յուրաքանչյուրի կողմից համակարգվում է մեկական ծրագիր:
- Ոլորտային ծրագրերի բյուջեի 30.7 տոկոսը կամ 23.2 մլրդ դրամն ուղղվում է ՀՀ ԱՆ կողմից իրականացվող թվով 7 ծրագրերի իրականացմանը:
- Բյուջետային ֆինանսավորման ծավալների առումով, հաջորդող դիրքերում են ԲԴԽ-ն, ՔԿ-ն և Դատախազությունը՝ համապատասխանաբար ոլորտում իրականացվող ծախսերի՝ 25.4, 23.2 և 13.4 տոկոս կշիռներով:
- Արդարադատության ամենամեծ բյուջետային ծրագիրը ԲԴԽ կողմից իրականացվող «Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» ծրագիրն է, որին ուղղվում է ոլորտի ծախսերի 25.4 տոկոսը կամ 19.2 մլրդ դրամ: Երկրորդ և երրորդ դիրքերում են ՀՀ ՔԿ կողմից իրականացվող «Քննչական ծառայություններ» և ՀՀ ԱՆ կողմից իրականացվող «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրերը՝ համապատասխանաբար՝ 17.5 և 13.8 մլրդ դրամ ֆինանսավորման ծավալներով:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(փակագծերում՝ կշիռը արդարադատության ոլորտի բյուջեում)



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՀ ԱՆ

- 1052 Քաղաքացիական կացության ակտերի գրանցում
- 1057 Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում
- 1093 Դատական և հանրային պաշտպանություն
- 1120 Քրեակատարողական ծառայություններ
- 1123 Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում
- 1149 Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում
- 1182 Հարկադիր կատարման ծառայություններ

- 1092 ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում
- 1080 Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում

ՀՀ ԴԱՏԱԽԱ-ԴԱՏՈՒԹՅՈՒՆ

- 1013 Փորձաքննության ծառայություններ
- 1087 Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն
- 1144 Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում

- 1231 Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտում և քննության ապահովում
- 1180 ՀՀ քննչական ծառայություններ
- 1181 Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում
- 1060 Մարդու իրավունքների պաշտպանություն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲՅՈՒՋԵՆ ԸՍՏ ԾՐԱԳՐԵՐԻ

(փակագծերում՝ 2024թ. աճը 2023թ. նկատմամբ)



1080	Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում
1180	ՀՀ քննչական ծառայություններ
1120	Քրեակատարողական ծառայություններ
1087	Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն
1231	Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովում
1182	Հարկադիր կատարման ծառայություններ
1057	Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում
1093	Դատական և հանրային պաշտպանություն
1123	Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում
1013	Փորձաքննության ծառայություններ
1092	ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում
1060	Մարդու իրավունքների պաշտպանություն
1149	Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում
1181	Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում
1052	Քաղաքացիական կացության ակտերի գրանցում
1144	Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Արդարադատության նախարարության բյուջեն 2019-2024թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Արդարադատության նախարարության բյուջեի աճը 2020-2024թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- ՀՀ արդարադատության նախարարության բյուջեն 2024-ին կկազմի 23.2 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 8.5 տոկոսով:
- Ան-ն կարևորվում է վեճերի այլընտրանքային լուծման եղանակների զարգացումը: Այս նպատակով 2023-ին Հայաստանում մեկնարկել է Արբիտրաժային կենտրոնի գործունեությունը: Կենտրոնի կայացումը կնպաստի ինչպես դատական համակարգի ծանրաբեռնվածության կրճատմանը, այնպես էլ՝ ներդրումային միջավայրի բարելավմանը: 2024-ին արբիտրաժային կենտրոնի գործունեության ապահովմանը կուղղվի 445.4 մլն դրամ:
- Էլեկտրոնային արդարադատություն ոլորտում նախատեսվում է իրականացնել տարբեր էլեկտրոնային հարթակների ներդրման և արդիականացման աշխատանքներ, շարունակել և ավարտել ընթացիկ ծրագրերը:
- Կներդրվեն և կգործարկվեն «Էլեկտրոնային դատարան» և «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգերը: Վերջինս կապահովի ՀՀ Ան համակարգման ոլորտի բոլոր համակարգերի սինխրոն աշխատանքը, ազգային և դատական արխիվների թվայնացման գործընթացը:
- Մեկնարկել է միասնական «Էլեկտրոնային նոտար» համակարգի ստեղծման աշխատանքները: Այն քաղաքացիներին հնարավորություն է տալու առանց նոտարական գրասենյակներ այցելելու և անհրաժեշտ տեղեկանքներ ու այլ փաստաթղթեր անձամբ ներկայացնելու, կատարել հեռավար գործարքներ:
- Կապահովվի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի թվայնացումը, ընդ որում՝ կընդլայնվեն թվայնացման շրջանակները, ընդգրկելով ոչ միայն ռեգիստրի գործակալության գոյություն ունեցող, այնպես էլ բիզնես ստեղծելու և վարելու հետ կապված բոլոր գործառույթների թվայնացումը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ծրագիր դասիչը	Ծրագիր	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024 կշիռ	2024/2023 տոկոս
1020	Քրեակատարողական ծառայություններ	14,353	13,763	59.3	-4.1
1057	Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում	2,385	2,304	9.9	-3.4
1093	Դատական և հանրային պաշտպանություն	2,234	2,063	8.9	-7.6
1123	Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում	1,243	1,236	5.3	-0.5
1149	Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում	500	531	2.3	6.3
1052	Քաղաքացիական կացության ակտերի գրանցում	154	156	0.7	1.3
1182	Հարկադիր կատարման ծառայություններ	3,750	3,138	13.5	-16.3
1228	Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում	719	-	-	-
Արդարադատության նախարարություն		**25,338**	**23,191**	**100**	**-8.5**

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Կներդրվի «Էլեկտրոնային հաշտարարության» համակարգը, որի միջոցով ամբողջովին թվային եղանակով կիրականացվի հաշտարարության գործընթացը
- Նախատեսվում է ՔԿԱԳ էլեկտրոնային համակարգի (e-civil) արդիականացում, մասնավորապես՝ էլեկտրոնային (www.justice.e-gov.am) հարթակի միջոցով մատուցվող ծառայությունների շրջանակի ավելացում:

- Արդարադատության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի թվում ամենամեծը «Քրեակատարողական ծառայություններ» ծրագիրն է՝ 13.8 մլրդ դրամ բյուջեով, որը կազմում է արդարադատության նախարարության բյուջեի 59.3 տոկոսը: Հետևում է «Հարկադիր կատարման ծառայություններ» ծրագիրը՝ 3.1 մլրդ դրամ բյուջեով և 13.5 տոկոս կշռով:
- 2024-ին «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի թիրախային ուղղությունը քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումն է և դրա արդյունքում տնտեսված միջոցների արդյունավետ բաշխումը և ուղղորդումը ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավմանը:
- Կարևորվում է նաև պրոբացիայի ծառայության կարողությունների և կադրային ներուժի զարգացումը, պրոբացիայի համակարգում էլեկտրոնային կառավարման գործիքների կիրառումը՝ ամբողջությամբ գործարկելով E-probation էլեկտրոնային կառավարման համակարգը:
- Հարկադիր կատարման ոլորտում կարևորվում է համընդհանուր բարեփոխումների իրականացումը՝ բարձրացնելու կատարողական գործողությունների արդյունավետությունը, ապահովելու կատարողական վարույթի մասնակիցների օրինական շահերի պաշտպանությունը, հավասարակշռվածությունը, նրանց խնդիրներին ու կարիքներին արագ և արդյունավետ արձագանքելու կառուցակարգերի ներդրումը:
- Իրականացվելիք գործողությունները կուղղվեն կատարողական վարույթի օրենսդրության համապարփակ վերանայմանը, հարկադիր կատարման վարույթի թվայնացմանը, քաղաքացի-հարկադիր կատարող արդյունավետ հաղորդակցության ապահովմանը:

1120 ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՊԱՏԱԿ

Դատապարտյալների պատժի կատարման և ուղղման համար անհրաժեշտ պայմանների ապահովում

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Դատապարտյալների զբաղվածության և իրավունքների պաշտպանություն

- Քրեակատարողական ծառայություններ ծրագրի բյուջեն 2023թ. համեմատությամբ կնվազի 4.1 տոկոսով և կկազմի 13.8 մլրդ դրամ:
- Ծրագրի բյուջեի 90.4 տոկոսը կուղղվի քրեկատարողական ծառայություններին, իսկ 5.7 տոկոսը՝ պրոբացիայի ծառայություններին:
- Դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց թիվը 2024-ին կկազմի 3,000 մարդ: Մեկ շահառու հաշվով քրեակատարողական ծառայությունների արժեքը կկազմի ամսական 345.7 հազ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է մոտ 8 հազ դրամով:
- Քրեակատարողական ծառայությունը կապահովվի 2 հատուկ նշանակության ավտոմեքենաներով, որոնց կուղղվի 22 մլն դրամ:
- Պրոբացիայի տակ գտնվող շահառուների թիվը կաճի մոտ 36.4 տոկոսով և կկազմի 7,500 մարդ: Մեկ շահառուի հաշվով տարեկան ծախսը կկազմի մոտ 104 հազ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ցածր է 28.2 տոկոսով:
- Պրոբացիայի ծառայության համար հատուկ նշանակության էլեկտրական սարքավորումների ձեռքբերմանը կուղղվի 139.5 մլն դրամ, ձեռք կբերվի թվով 150 սարքավորում:

Դասիչ	Ծրագիր/միջոցառում	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024 կշիռ %	2024/2023 տոկոս
1120	**Քրեակատարողական ծառայություններ**	**14,353**	**13,763**	**100.0**	**-4.1**
11001	Քրեակատարողական ծառայություններ	12,044	12,446	90.4	3.3
11002	Պրոբացիայի ծառայություններ	701	778	5.7	10.9
11004	Դեղորայքով ապահովում կալանավայրերում պահվող ազատազրկվածներին	33	-	-	-
11005	Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում	203	175	1.3	-13.8
11007	ԱՆ քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավո-ղված անձանց և դատապարտյալներին պատշաճ բժշկական օգնություն և սպասարկումն ծառայություններ	318	-	-	-
31001	ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	547	140	1.0	-74.5
31002	ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	28	35	0.3	21.6
31003	Քրեակատարողական հիմմնարկների շենքային պայմանների բարելավում	103	168	1.2	63.7
31004	Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում, շենքային պայմանների բավարարում	275	-	-	-
31005	Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված հաշմանդամություն ունեցող անձանց պահման մատչելի պայմանների ապահովում	15	-	-	-
31006	Քրեակատարողական ծառայության տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում	-	22	0.2	-
31007	ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում	85	-	-	-

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆՏՐՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

	Ելակետային մակարդակ	2024	2025	2026	2027	2028	2029	2030
Հանցանք կատարած անձանց կրկնահանցագործության թվի նվազեցում, տոկոս	10		20					
Կալանավորվածների և դատապարտյալների զբաղվածության ապահովում, տոկոս	28		40					
Քրեակատարողական հիմնարկներում պատժի կրման միջազգային չափանիշներին ամբողջությամբ համապատասխանող պայմանների ստեղծում, քանակ	10							70
Քրեակատարողական հիմնարկներում անվտանգության և պահպանության ինժեներատեխնիկական արդի համակարգերով վերազինում, տոկոս	75							100
Էլեկտրոնային հսկողության միջոցներով տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառման քանակ	0	200						
Դատարանների ծանրաբեռնվածության նվազում, տոկոս					20			
Հանրության իրավական իրազեկվածության մակարդակի բարձրացում,տոկոս	5			30				
Թվային արխիվի ստեղծում, տոկոս	0			90				
Հարկադիր կատարողական վարույթի շրջանակում ծանուցման եղանակների և գործիքակազմի կիրառության ընդլայնում	-	30						
Հարկադիր կատարողական գործողությունների կատարման միջին ժամկետի կրճատում, տոկոս	-	40						
Կատարված հարկադիր կատարողական վարույթների տեսակարար կշիռը ընդհանուր կատարողական վարույթների նկատմամբ, տոկոս	29.2			32				

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԲՅՈՒՋԵՆ

Բարձրագույն դատական խորհրդի բյուջեն 2019-2024թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Բարձրագույն դատական խորհրդի բյուջեի աճը 2020-2024թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- Բարձրագույն դատական խորհրդի բյուջեն 2024-ին կկազմի 19,2 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 12,8 տոկոսով:
- ԲԴԽ կողմից իրականացվում է «Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» ծրագիրը, որի նպատակն է՝ Դատական իշխանության անկախության երաշխավորումը, բնականոն գործունեության և դատական պաշտպանության իրավունքի ապահովումը:
- ԲԴԽ-ն կարևորվում է դատավորների ծանրաբեռնվածության նվազեցումը, գործերի քննման որակի բարձրացումը, գործերի քննության ժամկետների կրճատումը և դրանով իսկ քաղաքացիների համար արդարադատության մատչելիության բարելավումը
- Ծրագրի շրջանակներում իրականացվում են 25 բյուջետային միջոցառումներ, որոնք ուղղված են ԲԴԽ-ի և 19 դատարանների գործունեության ապահովմանը, վերապատրաստման և կարողությունների բարձրացմանը, շենքային պայմանների և տխնիկական հագեցվածության բարելավմանը, տրանսպորտային միջոցներով ապահովմանը:
- Բյուջետային ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների դատավորների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 60 տոկոս հավելման, ինչպես նաև Վերաքննիչ քաղաքացիական, Վերաքննիչ քրեական և Վերաքննիչ վարչական դատարանների դատավորների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 55 տոկոս հավելման սահմանմամբ:

1080 ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ՆՊԱՏԱԿ

Դատական իշխանության անկախության երաշխավորում, բնականոն գործունեության և դատական պաշտպանության իրավունքի ապահովում

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Դատական իշխանության գուծունեության և դատական պաշտպանության իրավունքի ապահովման արդյունավետության բարձրացում

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) Դատական համակարգի անկախությունը իշխանության այլ ճյուղերի, անհատների կամ ընկերությունների ազդեցությունից՝ 2025-ին կբարելավվի մինչև 6.3 մակարդակ՝ 2022-ի 3.3 մակարդակի դիմաց:

Դասիչ	Ծրագիր/միջոցառում		2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024 կշիռ	2024/2023 տոկոս
1080	**ԴԻ գործունեության ապահովում և իրականացում**		**16,991.7**	**19,173.7**	**100.0**	**12.8**
11001	Բնականոն գործունեության ապահովում	Բարձրագույն դատական խորհուրդ	3,835.7	3,891.0	20.3	1.4
11002		ՀՀ Վճռաբեկ դատարան	1,229.4	1,296.3	6.8	5.4
11003		ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան	773.1	725.8	3.8	-6.1
11004		ՀՀ վերաքննիչ քրեական դատարան	867.3	802.1	4.2	-7.5
11005		ՀՀ վերաքննիչ վարչական դատարան	447.4	496.5	2.6	11.0
11006		ՀՀ վարչական դատարան	803.2	926.0	4.8	15.3
11008		ՀՀ Արագածոտնի մարզի ԱԱԸԻԴ	321.5	382.6	2.0	19.0
11009		ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ԱԱԸԻԴ	541.7	576.0	3.0	6.3
11010		ՀՀ Արմավիրի մարզի ԱԱԸԻԴ	458.3	461.0	2.4	0.6
11011		ՀՀ Գեղարքունիքի մարզի ԱԱԸԻԴ	411.3	491.0	2.6	19.4
11012		ՀՀ Լոռու մարզի ԱԱԸԻԴ	567.9	603.8	3.1	6.3
11013		ՀՀ Կոտայքի մարզի ԱԱԸԻԴ	484.0	527.8	2.8	9.0
11014		ՀՀ Շիրակի մարզի ԱԱԸԻԴ	540.4	594.2	3.1	10.0
11015		ՀՀ Սյունիքի մարզի ԱԱԸԻԴ	384.7	482.7	2.5	25.5
11016		ՀՀ Տավուշի մարզի ԱԱԸԻԴ	352.1	373.6	1.9	6.1
11017		ՀՀ Սնանկության դատարան	591.3	702.6	3.7	18.8
11019		Հակակոռուպցիոն դատարան	554.4	564.5	2.9	1.8
11020		Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան	-	456.4	2.4	-
11022		Երևան քաղաքի ԱԱԸԻ քաղաքացիական դատարան	818.5	1,676.6	8.7	104.8
11023		Երևան քաղաքի ԱԱԸԻ քրեական դատարան	1,075.8	1,668.6	8.7	55.1
31001	ԲԴԽ տեխնիկական հագեցվածության բարելավում		432.0	647.3	3.4	49.8
31003	ԲԴԽ տրանսպորտային միջոցներով ապահ. բարելավում		-	20.0	0.1	-
11018	ԲԴԽ-ի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդ		256.9	376.0	2.0	46.3
11021	Վերապատրաստման ծառայություններ		2.3	5.9	0.03	158.6
31002	ԲԴԽ-ի և դատարանների շենքային պայմ.-ի բարելավում		164.4	425.5	2.2	158.8

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ





- ՀՀ դատախազության բյուջեն 2024-ին կկազմի 10.1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ ցածր է 71 մլն դրամով կամ 0.7 տոկոսով:
- Չնայած 2024-ին ՀՀ դատախազության բյուջեի նախատեսված կրճատմանը, այն 2019-ի մակարդակը գերազանցում է մոտ 1.9 անգամ:
- Դատախազության կողմից իրականացվում են երեք բյուջետային ծրագրեր: Դատախազության բյուջեի 91.2 տոկոսն ուղղվում է «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն» ծրագրի իրականացմանը, «Փորձաքննության ծառայություններ» ծրագրին ուղղվում է բյուջեի 8.7 տոկոսը, իսկ Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում» ծրագրին՝ 0.1 տոկոսը:
- Բյուջետային ծախսերի նվազումը պայմանավորված է «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն» ծրագրի ֆինանսավորման ծավալների 1,1 տոկոս կրճատմամբ: Այս ծրագրի նպատակն է ՀՀ-ում հանցավորության դեմ պայքարը, հանցագործության դեպքերի կանխարգելումը և կրճատումը, հանցագործության բոլոր դեպքերի առնչությամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովումը:
- «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն» ծրագրի վերջնական արդյունքը ՀՀ-ում մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացումն է, հանցավորությունների կանխարգելման արդյունավետության աճը:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ



Պետական շահերի պաշտպանության ոլորտում իրականացված գործառույթների արդյունքում պետությանը և համայնքներին պատճառված վերականգնված վնասի չափը

120 մլն դրամ

Դասիչ	Ծրագիր	2023 մլն դրամ	2024 մլն դրամ	2024 կշիռ	2024/2023 տոկոս
ՀՀ դատախազություն		**10,125.1**	**10,053.8**	**100.0**	**-0.7**
1013	Փորձաքննության ծառայություններ	849.4	872.8	8.7	2.8
1087	Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն	9,269.0	9,170.2	91.2	-1.1
1144	Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացում	6.7	10.8	0.1	62.2

Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ	ՉԱՓՈՐՈՇԻՉ
Հանցավորության մակարդակի ցուցանիշների բարելավում, հանցագործությունների բացահայտմանը նպաստում, հանցանք կատարած անձանց հայտնաբերում և նրանց քրեական պատասխանատվության ենթարկում:Պետությանը պատճառված գույքային վնասի վերականգնում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում	• Հանցավորության ընդհանուր մակարդակը և դրանում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշիռն ունի նվազման միտում, իսկ բացահայտման ցուցանիշները՝ աճի
Մինչդատական վարույթի արդյունավետության, պատիժների և հարկադրանքի միջոցների կիրառման ոլորտում օրենքի գերակայության ապահովում, կոռուպցիոն երևույթների կանխարգելում	• Քրվարույթի ընթացքում ապահովված է ներպետական և միջազգային իրավունքի նորմերով երաշխավորված իրավունքը, հանգամանքների լրիվ և ամբողջական բացահայտումը • Դատական համակարգում կոռուպցիոն երևույթները բացառված են
Պետությանը պատճառված գույքային վնասի վերականգնում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում	• Պետությանը և համայքներին պատճառված վնասի վերականգնում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մեխանիզմի և գույքային միջոցների պետական բյուջե վերադարձի ապահովում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

ՀՀ սահմանադրական դատարանի բյուջեն 2019-2024թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՀ սահմանադրական դատարանի բյուջեի աճը 2020-2024թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- ՀՀ սահմանադրական դատարանի բյուջեն 2024-ին կկազմի 844 մլն դրամ, որը նախորդ տարվա մակարդակը կգիջի 1.4 տոկոսով:
- Սահմանադրական դատարանի կողմից իրականացվում է մեկ բյուջետային ծրագիր, այն է՝ “ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում» բյուջետային ծրագիրը:
- Ծրագրի նպատակն է՝ ՀՀ-ում սահմանադրական արդարադատության իրականացումը և սահմանադրության գերակայության ապահովումը:
- Ծրագրի վերջնական արդյունքը ՀՀ-ում սահմանադրականության, քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքի ապահովումն է:



- Սահմանադրական դատարան ուղղված դիմումների քանակ
- Իրավական ակտերի սահմանադրականության ստուգման դիմումներ և դրանց վերաբերյալ կայացվող որոշումների քանակ
- Միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորու-թյունների՝ Սահմանադրության համապատասխանությունը ստուգելու դիմումների քանակ
- Սահմանադրական դատարանի լիազորությունների հետ չկապված դիմումների քանակ

ՍԴ-ի պաշտոնական կայքէջ և ֆեյսբուքյան էջ այցելությունների քանակ

ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՋԵՆ





- ՀՀ քննչական կոմիտեի բյուջեն 2024-ին կկազմի 17.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում մոտ 2 մլրդ դրամով կամ 12.8 տոկոսով:
- Քննչական կոմիտեի կողմից իրականացվում է բյուջետային մեկ ծրագիր, այն է՝ “ՀՀ քննչական ծառայություններ» բյուջետային ծրագիրը:
- Ծրագրի նպատակը Հանցագործությունների օբյեկտիվ և արդյունավետ նախաքննության իրականացման ապահովումն է:
- Ծրագրի վերջնական արդյունքը հանցագործությունների արդյունավետ նախաքննությունն է և նախաքննության ժամկետների կրճատումը:

- Ծրագրի բյուջեի 96.4 տոկոսը կուղղվի քրեական գործերով վարույթի իրականացման ծառայություններին:
- ՔԿ տրանսպորտային միջոցներով ապահովմանը կուղղվի 200 մլն դրամ՝ ձեռք բերելու 11 նոր տրանսպորտային միջոցներ:
- ՔԿ աշխատակազմի վերապատրաստումներին, նաև մասնագետների պատրաստման կազմակերպմանը կուղղվի 22.1 մլն դրամ:
- Մասնագիտական վերապատրաստում անցնող ունկնդիրների կրթաթոշակի տրամադրմանը կուղղվի 41.9 մլն դրամ:

ՀՀ քննչական ծառայություններ բյուջետային ծրագրի արդյունքային չափորոշիչները

Ծրագրի վերջնական արդյունքի չափորոշիչ.

- Ծրագրի վերջնական արդյունքի չափորոշիչ է սահմանված “Ընթացք տրված քրեական վարույթի տեսակարար կշիռը ընդհանուր վարույթի մեջ»: Ցուցանիշի ելակետային մակարդակը կազմում է 71 տոկոս: Պլանավորվում է 2026-ին այն հասցնել 88 տոկոս մակարդակի:

ՈՒղղակի արդյունքի ընտրված չափորոշիչներ.

- 2024-ին կանխատեսվում է, որ քրեական վարույթի թիվը 2023-ի համեմատությամբ կնվազի 1,081-ով և կկազմի 183,000:
- Քննիչների միջին ծանրաբեռնվածությունը կնվազի միջինում 43 վարույթով՝ կազմելով 261 նախորդ տարվա 304-ի դիմաց:
- Կտրուկ կաճեն վերապատրաստում անցնող ունկնդիրների քանակը՝ մոտ 1.6 անգամ: Նախորդ տարվա 495 ունկնդրի փոխարեն 2024-ին վերապատրաստումներին կմասնակցեն 785 աշխատակից:
- Կրթաթոշակ ստացող ունկնդիրների միջին կրթաթոշակը կկազմի 349,440 ՀՀ դրամ՝ աճելով 4.8 տոկոսով:

Ընթացք տրված քրեական վարույթի տեսակարար կշիռը ընդհանուր վարույթի մեջ



Քրեական վարույթի թիվ

Քննիչների միջին ծանրաբեռնվածություն

Կարճված քրեական վարույթի թիվ

Քննիչների միջին ծանրաբեռնվածություն



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵՆ



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն



Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բյուջեն 2024-ին կկազմի 587.1 մլն դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում մոտ 30 մլն դրամով կամ 5.4 տոկոսով:
- ՄԻՊ աշխատակազմի կողմից իրականացվում է «Մարդու իրավունքների պաշտպանություն» բյուջետային ծրագիրը:
- Ծրագրի նպատակը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն է:
- Ծրագրի վերջնական արդյունքը ՀՀ-ում խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումն է, առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործումը:
- Ծրագրի վերջնական արդյունքի չափորոշիչը Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից ՄԻՊ հաստատություններին շնորհված կարգավիճակի ցուցանիշն է:
- Հայաստանի ՄԻՊ ախատակազմին շնորհված է ամենաբարձր «A» միջազգային հեղինակավոր կարգավիճակը: Ցուցանիշի թիրախային մակարդակը շնորհված կարգավիճակի պահպանումը և վերահաստատումն է:
- ՄԻՊ հաստատություններին Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից շնորհվող կարգավիճակը վերանայվում է 5 տարին մեկ անգամ:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԲՅՈՒՋԵՆ





- ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բյուջեն 2024-ին կկազմի 413 մլն դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում մոտ 32 մլն դրամով կամ 8.4 տոկոսով:
- ԿԿՀ կողմից իրականացվում է «Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում» բյուջետային ծրագիրը:
- Ծրագրի նպատակն է նպաստել կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացմանը և հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը:
- Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրությունն է՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարելավումը:

- Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգի զարգացմանը կուղղվի ծրագրի բյուջեի 93.5 տոկոսը:
- Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանը և միջոցառումների իրականացմանը կուղղվի մոտ 26.9 մլն դրամ կամ ծրագրի բյուջեի 6.5 տոկոսը:

Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում ծրագրի արդյունքները

- 2024-ին նախատեսվում է վերանայել կենտրոնական և ՏԻՄ մարմիններում վարքագծի կանոնների առկա կառուցակարգերը, ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգեր, ներդնել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության նոր մեխանիզմներ, կատարելագործել կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմները, հզորացնել կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ մարմինների կարողությունները:
- Կներդրվի և կատարելագործվի գործարար բարեվարքության, գործարար իրավունքների պաշտպանության կառուցակարգերը, պետություն-բիզնես վարչարարությունը կդյուրինացվի:
- Հանրակրթական և բարձրագույն կրթական համակարգերում ներդրման նպատակով կմշակվեն առարկայական ծրագրեր, կկազմակերպվեն ուսուցիչների, դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների, ՔՀԿ-ների, ԶԼՄ ներակայացուցիչների, հանրային ծառայողների վերապատրաստումներ, կպատրաստվեն և կհեռարձակվեն կոռուպցիայի կանխարգելմանն ու բարեվարքությանն առնչվող տեսահոլովակներ և այլն:
- Կներդրվի շարունակական հակակոռուպցիոն կրթություն՝ մանկապարտեզ-դպրոց-բուհ կրթական շղթայով, կկատարելագործվի հանրային իրազեկման կառուցակարգերը և այդ միջոցներով կսերմանվի կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքը:

Վերջնական արդյունքի չափորոշիչներն են՝

- **Կոռուպցիայի ընկալման համաթվի 2023 թվականի մակարդակի (47 միավոր) աստիճանական բարելավում**
- **ԵԽ Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) գնահատականի բարելավում: Հայաստանին տրվել է «մասնակի համապատասխանություն» գնահատականը: 2024-ին նախատեսվում է «Ամբողջությամբ համապատասխանություն» գնահատականի ձեռքբերում:**
- **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) գնահատականի պահպանում: 2023թ. ՏՀԶԿ-ի կողմից Հայաստանին շնորհվել է «Ամբողջությամբ համապատասխանություն» գնահատականը:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՋԵՆ



- ՀՀ կոռուպցիոն կոմիտեի բյուջեն 2024 թվականին կկազմի մոտ 3.7 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում ավելի քան 1 մլրդ դրամով կամ 39.7 տոկոսով:
- ՀԿԿ կողմից իրականացվում է «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովում» բյուջետային ծրագիրը:
- Ծրագրի նպատակն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ենթակայությանը վերապահված քրեական գործերի քննության իրականացումը և օպերատիվ հետախուզական գործունեությունը:
- Ծրագրի վերջնական արդյունքը ողջամիտ ժամկետներում արդյունավետ օպերատիվ-հետախուզական գործունեության, հետաքննության և նախաքննության իրականացումն է:

Ծրագրի վերջնական արդյունքի չափորոշիչ

Կոռուպցիոն հանցագործություններով նախաձեռնված քրեական վարույթներով մեղադրյալ ներգրավված անձինք, որից՝պատասխանատվության ենթարկվածներ







1. Ծառայողի գործողությունները և որոշումները դատախազին բողոքարկելու արդյունքում բողոքը բավարարելու (այդ թվում՝ վերացված որոշումներ) դեպքերի տոկոս

2. Ծառայողի գործողությունների և որոշումների դատական կարգով բողոքարկման արդյունքում բողոքը մերժելու վերաբերյալ որոշումների տոկոս

Տնտեսական զարգացման և
հետազոտությունների կենտրոն (EDRC)
+374(0) 55 540 289
info@edrc.am
www.edrc.am